ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՕՖԵՐՏԱ

բնակարանի ամրագրման վերաբերյալ

Սույն հրապարակային օֆերտան (այսուհետ՝ «Օֆերտա») հանդիսանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն հրապարակային առաջարկ և ուղղված է անորոշ թվով անձանց՝ բնակարանի ամրագրման պայմանագիր կնքելու նպատակով:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Օֆերտա ներկայացնողը՝ **«Այվի Գարդեն» ՍՊԸ**, առաջարկում է բնակարանի ամրագրման ծառայություն՝ ստորև նշված պայմաններով:
1.2. Սույն Օֆերտայի ընդունումը (ակցեպտը) կատարվում է ամրագրման վճարի վճարման միջոցով ընկերության բանկային հաշվին՝ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ 1570098698820100՝ նպատակ դաշտում նշելով տվյալ համարի բնակարանի ամրագրման համար:
1.3. Օֆերտայի ակցեպտը հավասարազոր է կողմերի միջև ամրագրման պայմանագրի կնքմանը:

2. Ամրագրման առարկան

2.1. Ամրագրման առարկա է հանդիսանում նշված հասցեի ցանկացած բնակարան կամ կայանատեղի՝ ըստ վճարման նպատակում նշված գույքի կայքում նշված նույնականացնող համարի՝

- ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ԱՐՄԵՆԱԿՅԱՆ Փ. 108/7՝

2.2. Ամրագրման նպատակն է տվյալ բնակարանը սահմանված ժամկետում չառաջարկել այլ անձանց:

3. Ամրագրման ժամկետը

3.1. Բնակարանը ամրագրվում է **տաս** օր ժամկետով՝ սկսած ամրագրման վճարի ստացման օրվանից:
3.2. Ամրագրման ժամկետի ավարտից հետո, եթե հիմնական առուվաճառքի պայմանագիր չի կնքվել, ամրագրման իրավունքը դադարում է:

4. Ամրագրման վճարը

4.1. Ամրագրման վճարի չափն է **ամրագման նպատակով կատարված վճարը**:
4.2. Ամրագրման վճարը վճարվում է անկանխիկ՝ բանկային փոխանցումով:
4.3. Եթե հիմնական առուվաճառքի պայմանագիր կնքվում է, ամրագրման վճարը

- հաշվանցվում է բնակարանի գնի մեջ

5. Վճարի վերադարձի պայմանները

5.1. Եթե հիմնական պայմանագիրը չի կնքվում գնորդի նախաձեռնությամբ, ամրագրման վճարը **չի վերադարձվում**:
5.2. Եթե պայմանագիրը չի կնքվում վաճառողի նախաձեռնությամբ կամ վերջինիս մեղքով, ամրագրման վճարը վերադարձվում է ամբողջությամբ **երեսուն** աշխատանքային օրվա ընթացքում:

6. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

6.1. Վաճառողը պարտավորվում է ամրագրման ժամկետի ընթացքում բնակարանը չառաջարկել այլ անձանց:
6.2. Գնորդը պարտավորվում է ամրագրման ժամկետի ընթացքում ձեռնարկել հիմնական պայմանագիր կնքելու քայլեր:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն Օֆերտան գործում է հրապարակման պահից և կարող է փոփոխվել կամ դադարեցվել Վաճառողի կողմից՝ հրապարակման միջոցով:
7.2. Օֆերտայի ակցեպտը նշանակում է, որ Գնորդը ամբողջությամբ ծանոթացել և համաձայն է դրա պայմաններին:
7.3. Սույն Օֆերտայից բխող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ: